Հայտարարություն

<<Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան>> ՊՈԱԿ-ը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության <<Խոհարարական գործ>> մասնագիտական խմբի վարպետի թափուր պաշտոնի համար:

Հաստատության <<Խոհարարական գործ>> մասնագիտական խմբի վարպետի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայման է հանդիսանում դիմողի համապատասխանությունը ՀՀ ԿԳՆ 17.03.2016 թվականի թիվ 164-ն հրամանով հաստատված՝ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1013.03.4 «Խոհարարական գործ» մասնագիտության 1013.03.01.4 «Խոհարար» որակավորման պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» որոշման պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար հարկավոր է ներկայացնել.

1 դիմում ,

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն,

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետության քաղաքացի լինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Լոռու մարզ, Ալավերդի համայնք, ք. Ալավերդի, Մարտի 8-ի փող., 2-րդ շենք հասցեում՝ 2023 թ. հուլիսի 20-ից մինչև օգոստոսի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի օգոստոսի 7-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Լոռու մարզ, Ալավերդի համայնք, ք. Ալավերդի, Մարտի 8-ի փող., 2-րդ շենք հասցեում:

Տեղեկությունների համար կարող եք դիմել ՊՈԱԿ-ի՝ alarus@bk.ru էլեկտրոնային փոստի միջոցով: